Չիվա

Բնակչության թիվը՝ 1013

Չիվա գյուղը գտնվում է Վայոց Ձոր մարզի հարավ-արեմտյան մասում, Եղեգնաձոր-Երևան մայրուղու վրա, ծովի մակերևույթից բարձր է 1116 մ։
Գյուղը մարզկենտրոնից ունի 23 կմ հեռավորություն, իսկ մայրաքաղաքից՝ 102 կմ։
Գտնվում է Վեդի-ներքին Արփա նախալեռնային գոտում, ձմեռվա տևողությունը 4 ամիս է։
Չիվան, տեղակայված է Վարդենիսի լեռների ճյուղավորություններից կազմված ձորամիջում։ Ունի առկա 305 տնտեսություն։
Գյուղի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի <<Սյունիքի պատմություն>> աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ։ Սակայն դա սկիզբը չէ, այն ունի առավել հին պատմություն և անվանվել է նաև Չվա, Չուվա և այլն։ Գյուղի անունը չի ստուգաբանվում։ Ժողովրդական ավանդության համաձայն՝ 735թ. Մոզի կործանիչ երկրաշարժից ահաբեկված փախչող մարդիկ հասնում են Չիվայի տարածք, հանգիստ առնում և գոչում՝ չիք վայ, չկա վայ, որտեղից էլ առաջանում է գյուղի անունը։
Չիվան հարուստ գյուղ է եղել, Չիվայի ձորը հայտնի է բազմատեսակ պտղատու այգիներով։
Գյուղը վանքապատկան է եղել։ 13- րդ դարում հատուկ հրովարտակով տրվել է Ջալալ Օրբելյանին որպես կալվածք։
Մետաքսի ճանապարհի մի ճյուղը Սելիմով հասնելով Արենի, մի ճյուղով էլ թեքվում էր Չիվա՝ուղղություն վերցնելով դեպի Դվին նԱյրարատ։
Ենթադրվում է, որ գյուղը բնակեցված է եղել դեռևս հեթանոսական ժամանակաշրջանից։ Այդ մասին են վկայում հին գյուղատեղի տարածքում հայտնաբերված կարասներով թաղումները։
Գյուղը մի քանի անգամ կարճ տեղափոխումներ է ապրել, սկզբում `ձորամեջ, ապա՝ դիմացի սարալանջ, ուր կան քրիստոնեական վկայություններ՝ ժամտուն, խաչքարեր։
Ռուս-պարսկական պատերազմից հետո այստեղ են եկել հայ-գաղթականներ Խոյից, Սալմաստից։ Երկար ժամանակ Չիվա գյուղում հայերի հետ ապրել են նաև այլազգիներ։ 1988 թվականից գյուղն ամբողջապես դարձավ միատարր։
Բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունն ու հողագործությունն է։
Հիմնականում մշակում են՝ ծիրան, դեղձ, խաղող, բանջարաբոստանային կուլտուրաններ և հացահատիկ։
Գյուղն ունի միջնակարգ դպրոց , մշակույթի տուն, բուժկետ։
Գյուղում գործում է առևտրի մի քանի կետեր։